ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №5.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

08 դեկտեմբերի 2018թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

ՕՐԱԿԱՐԳ

1. *Ամբիոնի վարիչի թափուր տեղի տեղակալման մրցույթ:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/
2. *2018-19 ուսումնական տարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների, ընթացիկ ստուգումների և քննաշրջանի ժամանակացույցի հաստատում:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *Այլ հարցեր:*

ԼՍԵՑԻՆ -Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Նիստին մասնակցում էին խորհրդի 15 անդամներից 14-ը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց, որ ,,ԸՆդհանուր մաթեմատիկայի և բնագիտության,, ամբիոնի վարիչի թափուր տեղի համար թեկնածու է գրանցվել նույն ամբիոնի ք.գ.թ., դոցենտ Գևորգ Սարգսի Սիմոնյանը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցողը ներկայացրեց նաև մրցութային հանձնաժողովի կազմը. նախագահ Հովսեփյան Կարեն Հայկի
անդամներ Ամիրզյան Մերի Գագիկի
Հակոբյան ԱրթուրՊայքարի

Մրցութային հանձնաժողովի նախագահ Կ. Հ. Հովսեփյանը ըստ գործող ընթացակարգի ներկայացրեց ,,Ընդանուր մաթեմատիկայի և բնագիտության,, ամբիոնի վարիչի թափուր տեղի տեղակալման մրցույթին մասնակցելու համար ք.գ.թ., դոցենտ Գ. Ս. Սիմոնյանի ներկայացրած փաստաթղթերի փաթեթը: Նա մասնաճյուղում աշխատում է 2002թ. որպես դոցենտ, իսկ 2018թ. սեպտեմբերից ,,Ընդանուր մաթեմատիկայի և բնագիտության,, ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար: Ընդգծելով, որ նա բավարարում է ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու կանոնակարգային պահանջներին:

Այնուհետև ֆակուլտետի գիտխորհուրդը քվեարկությամբ հաստատեց թեկնածուին:

Տվյալները ներկայացնելուց հետո ելույթի համար ձայնը տրվեց Գ. Ս. Սիմոնյանին: Նա ներկայացրեց իր գիտահետազոտական ուղղվածության ծրագիրը կապված ամբիոնի հետագա առաջնթացի հետ:

Ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը առաջարկեց ընտրել հաշվիչ հանձնաժողով:

Միաձայն հաշվիչ հանձնաժողով ընտրվեց հետևյալ կազմով.

1. Գուլակյան Գեղամ Վոլոդյայի նախագահ
2. Օթարյան Քնար Վլադիմիրի անդամ
3. Ներսիսյան Լիանա Մելիքի անդամ

Անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն:

Քվեարկության արդյունքում՝ 14 մասնակիցներից կողմ քվեարկեցին 14-ը, դեմ, ձեռնպահ չկար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար ֆակուլտետի գիտխորհրդի անդամ Ա. Վ. Ցուցուլյանը շնորհավորելով նորընտիր ամբիոնի վարիչին, պարտավորեցրեց, որ ամբիոնը լինելով գիտական կառույց, լուրջ

ուշադրություն պետք է դարձնել գիտահետազոտական աշխատանքներին և ունենա իր աշխատանքային պլանը: Այնուհետև քանի որ 2019-20 ուսումնական տարում ընդունելություն է կազմակերպվելու ,,Բնապահպանություն և բնօգտագործում,, մասնագիտություն գծով անհրաժեշտ է նորացնել կրթագիրքը:

Ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ևս շնորհավորեց և հույս հայտնեց, որ ամբիոնը համագործակցված կաշխատի դեկանատի հետ, բարձրացնելով՝ ուսումնական, գիտական աշխատանքների որակը:

Այնուհետև խորհրդի նախագահը ընդգծեց, որ,,Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության,, ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներին, անհրաժեշտ է առանձնացնել մաթեմատիկայի ուղղվածությունը և ստեղծել առանձին մաթեմատիկայի ամբիոն:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը:

Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին հաստատելու ֆակուլտետի գիտխորհրդի նիստի որոշումը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը ներկայացրեց 2018-19ուսումնական տարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների, ստուգումների և ձմեռային քննաշրջանի ժամանակացույցը: Ընդգծելով, որ բազմիցս քննարկվել է ամբիոններում և անհատապես դասախոսների և ուսանողների հետ, նա առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2018-19ուսումնական տարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների, ստուգումների և ձմեռային քննաշրջանի ժամանակացույցը:

Օրակարգի երրորդ հարցի մասին Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց ներֆակուլտետային գործընթացին վերաբերող հանձնարարականներ:

ՆԱԽԱԳԱՀ Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ